Վոչմի գեղքում չի կարելի այդ տառաջադրանքի հիման վրա կազմել ամբողջ շրջանի համար միատեսակ ցանքաշրջանառություն, տալ շրջանի մեջ մտնող բոլոր տնտեսությունների համար միատեսակ մասնագիտացում։ Անհրաժեշտ ե առաջադրությունը դիմուկիցիայի յենթարկել ըստ առանձին տնտեսությունների (կամ տնտեսության խմբերի), ստեղծելով առանձին տնտեսությունների արտադրական հնարավորությունների համաձայն առանձին մասնագիտացման տիպեր, որինակ՝ 1) հատիկներ, արտադրող անսպուններ և խոտացանություն, 2) կարտոֆիլ, հատիկավոր ընկեղեններ, խոզարտօնություն և այլն։ Այդ կինի շրջանի բոլոր բնական և տնտեսական սեսուրսների լրիվ ողտագործման հիման վրա պլանային առաջադրանքի իրականացման ամենալավ ուղին։ Այդ սեսուրսները շրջանի բոլոր մասերում կարող են միատեսակ չլինել, ապա այդ բոլոր մասերում միատե-

սակ ցանքաշրջանառություններ չեն կարող լինել: Բացի այդքանագույն պահում են մասնագիտացումը, վորովճետեւ մի սխեմայի տակ ե դնում բոլոր ապրանքային կուլտուրաները: Ազրոտեխնիկայի տեսակետից նման մոտեցումը նույնպես չի կարող քննադատության դիմանալ, վորովճետեւ բոլոր ապրանքային կուլտուրաների համար միաժամանակ բարենպաստ պայմաններ ստեղծելը հնարավոր չե: Չնայած դրան, մենք հաճախ ենք հանդիպում ամբողջ շրջանի համար մեկ ցանքաշրջանառություն մտցնելու փաստերի: Որինակ՝ Կենտրոնական Սևահողային մարզի Սեսլավինսկու շրջանն ունի կարտոֆիլի մասնագիտացում և ամբողջ շրջանի համար նախագծել եր հետեւալ ցանքաշրջանառությունը (ցանքաշրջանառությունը՝ Հողոտումատի կողմից խոտանված ե): 1) մաքուր ցել, 2) աշնանացան, 3) կարտոֆիլ, 4) զբաղված ցել, 5) աշնանացան, 6) գարնանացան (հասկավոր): Այս ցանքաշրջանառության մեջ առաջատար կուլտուրան բռնում ե շրջանի ամբողջ տերիտորիայի 160%-ը միայն և դրանով ել արտահայտվում և ամբողջ մասնագիտացումը, այնինչ շրջանում յեղած կրախմալի զավոդի մոտ գտնվող տընտեսություններում ցանքաշրջանառության մեջ կարտոֆիլն առվելի ուժեղ պիտի լինի արտահայտված, քան թե հեռու ընկած տնտեսություններում: Միաժեսակ ցանքաշրջանառություն չի կարող կիրառվել նաև շրջանի հողերի տարբեր հատկությունների պատճառով: Շրջանը հիմնականում ունի լվացված սևահողեր, մասսամբ ալվազախառն (վերածվում են ավազային հողերի), մասսամբ կավախառն և կափային հողեր: Ավազախառ հողերը գտնվում են հենց զավոդին մոտ, վորը նպաստավոր պայմաններ և լուսաեղում կարտոֆիլի մշակության համար: Հողերի տարբեր հատկությունների հետեւանքով ազրոտեխնիկական մոտեցումը ևս դեպի այդ հողերը պիտի լինի տարբեր: Զի կարելի այդ բոլոր սուանձնատկությունները պարփակել մեկ ցանքաշրջանառության մեջ: Ամեն մեկ առանձին դեպքում անհրաժեշտ է նաև առանձին մոտեցում:

Կոլտնտեսական արտադրության համար ցանքաշրջանառության հիմնադրման չորրորդ կազմակերպչական մոմենտը ցանքաշրջանառությունը կոլտնտեսության կազմակերպչական-տնտեսական հնարավորությունների հետ շաղկապելն ե: Ազրոտեխնիկայի տեսակետից ամենակատարելազործված ցանքաշրջանառությունը պետքական չի լինի, յեթե նա համաձայնեցրած չե տնտեսության

տեխնիկական զինվածության, նրա բանվորական ուժի հետ: Միանդամայն պարզ ե, վոր ցանքաշրջանառությունը և նրա հետ կապված ազրոկոմպլեքսն իրենց իրականացման համար պահանջում են վորոշ աշխատանքներ (նախացանքային մշակություն, ցանք, ցելերի վար և նրանց խնամք, շարքահերկ կուլտուրաների խնամք, բերքահավաք, աշնանացան և այլն) և այն ել վորոշ ժամանակամիջոցներում կատարվությունը Այդ աշխատանքների կատարման համար տնտեսությունը պիտի ապահովված լինի բանվորական ձեռքբարվ, քաշող ուժով, համապատասխան գործիքներով և մեքենաներով:

Ետք կարենոր ե, վորպեսզի ցանքաշրջանառությունը բանվոր ձեռքերի և քաշող ուժի խիստ լարվածություն չառեղծի (վորոշ կարճ ժամանակամիջոցներում), այլ ոգտագործի այդ ուժերը վեգետացիոն ամբողջ շրջանում համաշափի: Բանվոր ձեռքերի և քաշող ուժի լարվածությունը վտանգի տակ ե դնում աշխատանքների կատարումը ժամանակի տեսակետից, իսկ աշխատանքների ամեն մեկ ուշացում իշեցնում ե ազրոտեխնիկայի վորոտ, պակասեցնում և բերքը:

Ցանքաշրջանառության պահանջի համաձայն, քաշող ուժի և բանվոր ձեռքերի հաշվառման ժամանակ անհրաժեշտ և հաշվետնել տնտեսության մեխանիզացիայի աստիճանը: Արտադրական պրոցեսների մեխանիզացիան պակասեցնում և տնտեսության բանվոր ձեռքի պահանջը, մեխանիզացիայի բացակայությունը, բնդհակառակը, մեծացնում և ալդ պահանջը: Քաշող ուժի և բանվոր ձեռքերի գրաֆիկը կազմելու ժամանակ անհրաժեշտ յենել փաստացի նախագծված մեխանիզացիայից: Զի կարելի ցանքաշրջանառության և նրա ցուցանիշները կազմելու ժամանակ յենել 100%՝ մեխանիզացիայից, յեթե վերջինս չի նախագծված մոտ ժամանակում: Զի կարելի այն պատճառով, վոր նման հաշվիմերի հիմն վրա կազմած ցանքաշրջանառությունը ապահովված չի լինի արտադրության համապատասխան միջոցներով և ստիպված պիտի լինի գործադրելու ձիու և մարդու ուժ (գուցե և յեղան): Այսպիսով 100%՝ մեխանիզացիայի դեպքում միանգամայն պիտանի գրաֆիկը կարող է անբավար գուրս գալ և չի կարող 100% ային մեխանիզացիայի բացակայության դեպքում ուսակացացիայի յենթարկվել: Իրեւ որինակ կարելի յերեկ շարքահերկ դաշտի զգալի մեծացումը ցանքաշրջանառության մեջ (Հյուսիսային կովկասի մի քա-

նի շրջանները), առանց հաշվի առնելու կոլտնտեսությունների և ՄՏՀԿ-ի հնարավորությունները քաշող ուժի տեսակետից: Դրա հետևանքով այդ դաշտը (ՀԱՆԱ) հաճախ, ինչպես հարկն է, չի մը շակվում, ժամանակին չի հավաքվում, ուստի և ինքն ել քիչ բերք շակվում: Այսպիսով կորցնում ե իր նշանակությունն իրեն լավ նախորդ: և տալիս և կորցնում ե իր նշանակությունն իրեն լավ նախորդ:

Այսպիսով կոլխոզներում կիրառվող ցանքաշրջանառությունների կազմակերպչական-անտեսական հիմնական պայմաններն են. 1) պլանային առաջադրանքի իրականացումն ըստ կուտանտեսության մասնագիտացման:

2) Ցանքաշրջանառության համապատասխան լինելը տընտեսության սոցիալական ձեին: Այսպիսով խորհուտեսության ցանքաշրջանառությունը չի կարող ավտոմատիկ ձեռք փոխադրվել կոլտնտեսական արտադրության մեջ, վորովհետեւ այն չի համապատասխանի նրա արտադրակում շահերին:

3) Ցանքաշրջանառության համապատասխան լինելը ավյալ կոլտնտեսության կազմակերպչական-անտեսական և տեխնիկական հնարավորություններին:

4) Գլանային առաջադրանքը խանդարելու և ունիվերսալիզմի անթույլատըլի լինելը, վորը ջուր և լցնում սոցիալիստական շինարարությունը վիճեցնել ցանկացող դասակարգակին թշնամու ջրաղացին:

ՑԱՆՔԱՇՐՋԱՆԱՌԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԻՆ ԴԱՇԵԲԻ ՆՇԱՆԱՋԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԵՐԸ

Վորպեսզի կարողանանք յուրաքանչյուր կոլտնտեսության համար շարադրած նյութի հիման վրա ցանքաշրջանառություն համար շարադրած անթանանք նաև այն դերին, վոր ունին կազմել, մենք պիտի ծանոթանանք նաև այն դերին, վոր ունին կազմել, մենք պիտի ծանոթանանք նաև այն դերին, վոր ունին կազմել, մենք պիտի ծանոթանանք նաև այն դերին, վոր ունին ցանքաշրջանառության մեջ զյուղատնտեսական բույսերի առանձին խմբը: Շատ կարեոր ե իմանալ նաև, թե ինչպես են ազդին վորը: Շատ կարեոր ե իմանալ նաև, թե ինչպես են ազդին վորը: Հաջորդ կուտարաների բերքատվության վրա դում պյուր բույսերը հաջորդ կուտարաների բերքատվության հետ:

Այդ տեսակետից ցանքաշրջանառության մեջ առաջին հերթին դրական դեր են կատարում՝ ցելը, շարքահերկ կուլտուրաները (այսինքն՝ միջնարքային մշակություն պահանջող կուլտուրաները՝ կարտոֆիլ, կերի արմատապտուղներ, շաքարի ճակնդեղ, յեղիպտացորեն, արևածաղիկ և այլն) և խոտը:

ՅԵԼԻ ԳԵԼԻ ցանքաշրջանառության մեջ

Յելաղաշտի նշանակության մասին մենք արդեն խոսել ենք այն գլխում, ուր խոսվում է հողի մշակման մասին: Այստեղ միշտ անհրաժեշտ ե ընդգծել այն խոշոր գերը, վոր ունի մաքուր ցելը մոլախոտերի գեմ պայքարելու խնդրում: Այդ մոմենտն այժմ հացահատիկների բերքատվության բարձրացման խնդրում ունի խոշոր նշանակություն: Միաժամանակ ցելի գրական հաֆեկտն ամրողապես կախված է նրանից, թե յերբ և ինչպես ե մշակվում այդ ցելը: Այդ բանը շատ պարզ կարելի յէ տեսնել կրասնոկուտի փորձակայանի ստորև բերված տվյալներից: Այդ փորձի ժամանակ հաշվի յէ առնված մոլախոտերի քանակը մեկ քառոտկուսի մետք տարածության վրա տարբեր տեսակի ցելերում:

Սև ցելի վրա	10 բույս
Վաղ » »	10 »
Միջին » »	81 »
Ուշ » »	124 »

Բացի այս, ինչպես մենք հիշում ենք, մաքուր ցելը նպատառում է հողի մեջ ջուր հավաքելուն և նիտրատներ կուտակելուն (ազոտական թթվի աղեր): Ի հաշիվ որդանական նյութերի կամ գոմաղրի:

Մաքուր ցելն աշնանացանների համար ամենալավ նախորդն է հանդիսանում (առանձնապես ցորենի), իսկ միշտը ցանքաներում (Սիրիք, Հյուսիսային կաղակստան) նաև գարնանային ցորենների համար: Հազվագյուտ գեղագերում (Սիրիք) նաև նախորդում է կտավհատին կամ շաքարի ճակնդեղին: ԽՍՀՄ-ի չորային պայմաններում մաքուր ցելն ակրոտեխնիկորեն ճիշտ կազմած ցանքաշրջանառության մեջ պարտադիր է: Այդ բանը գտել ե իր արտահայտությունը յերաշտի գեմ պայքար կազմակերպելու համար հրավերված համամիութենական կոնֆերանսի (1931 թ) վորոշումներում: Վորպեսզի ցանքաշրջանառությունը նպաստի դաշտերը մոլախոտերից ազատելուն և հողի մեջ ջուր կուտակելուն, յերաշտի յենթակա ցրջաններում ցանքաշրջանառության մեջ պարտադիր կերպով պիտի մտցնել վաղ մաքուր ցել:

«Չոր ցրջաններում, ուր գեռ չի հաջողվել ստանալ շաքարի կուլտուրաների հաջոր ցանքեր, միայն ցել պիտի դարձնել մշակովի հողերի մեկ յերբորդից մինչև մեկ հինգերորդը»:

Վոչ չորային գոտում մաքուր ցելերը հաջող կերպով կաբոք են փոխարինվել զրադված ցելերով, սակայն մոլախոտերով ուժեղ վարակված հողերում և ոգտավետ և նման արտերը հատակացնել նախ մաքուր ցելերին: Առանձնապես նման ցելերն այստեղ հարկավոր են այն սերմնաբուծական կոլտնտեսություններում, վորոնք զբաղված են աշնանային կուլտուրաների:

Անհրաժեշտ և առանձնապես շնչառել այն նշանակությունը վոր ունի ժամանակին կատարված մաքուր ցելի վարը և ամառային խնամքը: Վոչ մի գելքում վարը չի կարելի հետաձգել մինչչեվ ուշ գարնանացան կուլտուրաների ցանքի վերջը և այլն: Նըման դրույթը 1932 թվին խափանեց ցելերի վաղ վարը: Անհրաժեշտ և նաև հիշել, վոր առանց ամռան ընթացքում ցելի մեջ յեղած մոլախոտերը վոչնչացնելու, նա կորցնում և իր ամբողջ իմաստը և կարող և հանդիսանալ միայն իրեն մոլախոտերը տարածող ոջախ:

Այն գելքերում, յերբ կուլտնտեսությունն ավելի քիչ մաքուր ցել ունի, քան այդ անհրաժեշտ և աշնանացանների համար, ապա յեղած ցելում առաջին հերթին պիտի ցանել աշնանացանցորեն, վորովհետև այն թանկարժեք և պահանջկոտ կուլտուրայն, քան թե աշնանացան աշորան:

Յանձնութեառության մեջ շարժական դաշի նշանակությունը

Շարքահերկ դաշտի ագրոտեխնիկական հիմնական նշանակությունը, ինչպես և մաքուր ցելինը, մոլախոտերի գեմ կովելնն: Ամառային միջջարքային մշակությունը կորում և մոլախոտերի ծիկերը և նպաստում և հողում յեղած մոլախոտերի սերմերի պաշարի վոչնչացմանը:

Շատ շարքահերկ կուլտուրաների համար (ճակնդեղ, կարտոֆիլ, բանջարանոցային բույսեր և այլն) կատարվում և ավելի խոր և խնամքով մշակություն, վորը նույնպես բարձրացնում և նրանց իրքը նախորդների՝ նշանակությունը: Մի շարք շարքահերկ բույսեր (դդում, յեղիպտացորեն և այլն) ունին հզոր արմատային սիստեմ, ոգտագործում են հողի խոր շերտերի ջրի և սննդի պաշարը և փոխադրում հողի վերին շերտերը: Բացի այդ, շարքահերկ բույսերն ոգտագործում են ամառվա յերկրորդ կեսի տեղումները և յերաշտ շրջաններում ավելի քիչ են տուժում չորքամիներից (յեղիպտացորեն, սորդո և այլն): Այդ բոլորն ստի-

պում են ցանքաշրջանառության մեջ շարքահերկ բույսեր ունենալ այն բոլոր շրջաններում, ուր ընդհանրապես հնարավոր և շարքահերկ բույսերի մշակությունը:

Շարքահերկ ից հետո լավ են լինում գարնանային հացահատիկները և ուրիշ գարնանային կուլտուրաները (վարսակ, դարի, կորեկ), վորը հաստատվում և փորձնական հիմնարկների բազմամյա տվյալներով:

Բացի գարնանացաններից, մի շարք շրջաններում շարքահերկ կուլտուրաները կարող են լինել լավ նախորդներ նաև աշնանացան կուլտուրաների համար: Շարքահերկ վաղ հասունացող տեսակները և սորտերը կարող են ոգտագործվել զբաղված ցելերի համար (շարքահերկ ցել): Այս գերը կարող են կատարել կարտոֆիլի, սիլոսային կուլտուրաների վաղահաս սորտերը: Շարքահերկ ցելերի աղդեցությունը (նրանց խնամքով մշակելու դեպքում) խոնավացած (յւլայիննայ) գոտում մոտենում և մաքուր ցելերի պղեցությանը:

Հարավում, ուր աշնանացանները ցանքում են ուշ, նրանց համար շատ լավ նախորդ են բանջարաբույսերը: Սերմի համար մշակվող յեղիպտացորենից և արևածաղկից հետո աշնանացանը պակաս մերք և տալիս, քան թե մաքուր ցելից հետո:

Շարքահերկ դաշտն իրեն հաջորդող կուլտուրաների բերքատվության վրա դրական իմաստով աղդելուց բացի, պակասեցնում և քաշող ուժի և բանվոր ձեռքերի քանակն աշնան վարի ժամանակ, վորի կարիքն այդ յեղիպտերում սովորաբար չի զգացվում: Սակայն պիտի նշել, վոր շարքահերկ բույսերը պահանջում են բանվոր ձեռքերի և քաշող ուժի մեծ լարվածություն խնամքի և բերքահավաքի համար, լարվածություն, վորը թուլանում և միայն աշխատանքների լրիվ մեխանիզացիայի դեպքում:

Ցանքաշրջանառության դրական ողակներից մեկի՝ շարքահերկ դաշտերի տարածությունների լայնացման հետ մեկտեղ անհրաժեշտ և միաժամանակ հաշվի առնել կուլտնտեսության բոլոր հնարավորությունները, վորպեսզի հետազոտում շարքահերկ դաշտը հանդես չգա մոլախոտեր տարածող ոջախի գերում, կամ բոլորովին չհավաքվի:

Պիտի հիշել, վոր անխնամ մշակելու դեպքում շարքահերկ դաշտը կարող և ունենալ միայն բացասական աղդեցություն, վորովինեան շատ արագ ծածկվում և բարձր մոլախոտերով: Այդ մոխոտերը կոնկուրենտներ են հանդիսանում շարքահերկ կուլտու-

բաներին, և արտն արտաքին տեսքից չի տարբերվում չմշակված խամից:

Շարքահերկ դաշտը կարող է բարձր ազդութեանի կական և տնտեսական նշանակություն ունենալ միայն խնամքով մշակվելու դեպքում: Յեթե տնտեսության մեջ ցանգում են աշխանացան հաղպատկներ և գարնանացաններ, ապա շարքահերկ կուլտուրաների ամենալավ տեղը կլինի աշխանացաններից ճետու և գարնանացաններից առաջ: Շարքահերկ կուլտուրաների գերը ցանքաշահության մեջ առանձնապես շեշտափած է յերաշտի գեմ պայմանագրության մեջ առանձնապես համար համամիտութենական կոնֆերանսում քարելու համար համար համամիտութենական կոնֆերանսում (1931 թ.): Յերաշտ շրջաններում, ուր շարքահերկ կուլտուրաներն ունեն մեծ տնտեսական նշանակություն, գարելահողերի մեկ մերորդ մասից վոչ պակասը պիտի և հատկացվի շարքահերկ կուլտուրաներին և մաքուր ցելերին:

ԽՈՏԵՐԻ ԴԵՐԸ ՑԱՆՔԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵջ

Բաղմամյա խոտերի դրական ազդեցությունը հողի բերբության և հաջորդ կուլտուրաների բերքի վրա կապված է մի ամբողջ շարք պայմանների հետ:

Ամենից մեծ նշանակություն ունեն բաղմամյա թիթեռնածաղկեր (յերեքնուկ հյուսիսում, առվույտ և կորնդան հարավում):

Ինչպես արդեն մենք գիտենք, թիթեռնածաղկեր խոտերն իրենց արմատների վրա ապրող պաւարաբակտերին շնորհիվ հողում կուտակում են աղոտ: Բացի այդ, նրանք իրենց խոր գնացող արմատներով թափանցում են հողի ցածր շերտերը և դուրս են բերում այնտեղից փոսփոր և կիր, հարստացնելով գարելաշերտն այդ նյութերով:

Բերում ենք ավյալներ (գերմանական), վորոնք ցույց են տալիս աղոտի, փոսփորի, կրի և կալիումի քանակը թիթեռնածաղկերի խոտերի և ցորենի մնացորդ խողանի մեջ (կիրոգրամներով մեկ հեկտարին):

	Աղոտ (N)	Գուստորական թթու (P ₂ O ₅)	Կալցիում (CaO)	Կալիում (K ₂ O)
Աղոտյան	152,5	44,0	220,0	41,1
Կարմիր յերեքնուկ	214,6	83,9	292,0	90,0
Կորնդան	158,0	33,3	148,6	47,8
Ցորեն	26,4	13,3	86,8	20,7

Մեր ավյալները նույնպես ցույց են տալիս, վոր յերեքնուկը իրենից հետո հողում թողնում է շատ աղոտ: Այսպես՝ Շատիլովի փորձակայանում (Կինտրոնական Սևահողային շրջան) գտել են, վոր 2-րդ տարվա յերեքնուկը մեկ հեկտար հողում թողել եր-65,7 կիլոգրամ աղոտ: Ուբալի շրջանում հաջողվեց հողում հայտնաբերել, յերեքնուկի յերկարաւում մշակության հետևանքով, մեկ հեկտարին 4 տոննից առավել աղոտի ավելացում:

Ապա բաղմամյա խոտերը թողնելով ամրող վարելաշերտում տարածված արմատային մնացորդների մեծ քանակություն, հարբա-տացնում են հողը հումուսով, ստեղծում «ստրուկտուրա», բաձրաց-նում ջրաթափանցկությունը, աերացիսով լավացնում են հողի ֆիզիկական հատկությունները: Պոդգոլ հողերում խո-տերը մեծացնում են վարփող շերտը և հողերը գարձնում են ավելի կուլտուրական, լավացնելով յենթահողի պոգոլացած հորիզոնի հատկությունները: Աղիացած հողերում նրանք ստվերի տակ առ-նելով հողը, նպաստում են աղիացման պրոցեսի պակասեցմանը, և նույնիսկ վորոշ չափով պակասեցնում են աղերի քանակը:

Վերջապես բաղմամյա խոտերը խիտ ծածկոց կազմելու դեպ-քում մեծ դեր են կատարում մոլախոտերի գեմ պայմանական գրն-պրում, այսինքն՝ խեղդում դուրս են մզումներունց: Այդ պատճա-ռով սովորաբար բաղմամյա խոտերից հետո գաշտ ունենում է ավելի բարձր բերբություն: Բաղմամյա խոտերը բոլոր շրջաննե-րում մյուս գյուղատնտեսական կուլտուրաների համար հանդի-ստում են իրեն լավ նախորդներ:

Անձրաժեշտ է շեշտել նաև բաղմամյա խոտերի տարածու-թյունների լայնացման կարևորությունն անապահության զար-դացման տեսակետից:

Ինչպես մենք արդեն նշել ենք, իրեն նախորդներ մեծ դեր են խաղում թիթեռնածաղկեր խոտերը: Երանց հետ հացարույսեր մշակելու (որինակ՝ Agropyrum sibiricum-ը հարավում և Phleum pratense-ն հյուսիսում) նպաստում է հողերի «ստրուկտուրա» կազմելուն, սակայն հիմնականում զրանք ցանքում են թիթեռնածաղկերի խոտերի հետ միասին գլխավորապես անտեսական նկա-տառութերով, վորովհետեւ այդ դեպքում ստացվում է խոտի ավելի յերկարաւում և հավասարաշամի բերք:

Խոտերի, իրեն նախորդների, վերի վերաբերյալ բերում ենք ավյալներ, վորոնք ապացուցում են մեր ասածները և ձշում են նրանց գերը տարբեր շրջաններում:

Բեղենչուկի փորձակայանում (սևահող) գարնան ցորենի բերքը (1912—1926 թ. թ.) յեղել ե առվույտից հետո առաջին տարին 11,1 ցենտներ, II տարին՝ 10,7 ցենտներ, փափուկ հողում 8,2 ցենտներ:

Բազմամյա խոտերի դրական ազդեցությունը մենք տեսնում ենք նաև վարսակի բերքի վրա: Այսպես՝ Բեղենչուկում (15 տարվա տվյալներ) վարսակից ստացվել ե բերք՝

Փափուկ հողում 8,2 ցենտներ:

Առվույտից հետո I տարին	11,1	»
» » II	10,0	»

Նույն ստացված ե Ռոստովի փորձակայանում կարտոֆիլի համար:

Այսպիսով, բազմամյա խոտերը բերքի բարձրացման խընթացում ունեն դրական ազդեցություն (առաջին հերթին թիթեռնածաղկավորները և նրանց խառնուրդը հացաբույսերի հետ):

Սևանղային շրջանի համար (Կ. Սևանղոյ շրջ. և ՌիՄԽՀ) խոտերի դրական ազդեցությունը նույնպես կասկածից դուրս ե:

Նույն դրությունը հաստատվում է ՌիՄԽՀ-ի փորձական հիմնարկների կողմից ստացված մեծաքանակ տվյալներով, վորոնք բնորոշում են յերեքնուկն իրեկ հրաշալի նախորդ: Նրա դրական դերն արտահայտվում ե ամենատարբեր կուլտուրաների վրա: Սևանղային (վոչ չորային) գոտում յերեքնուկն զգալի դրական ազդեցություն ե թողնում հողի բերքիության վրա նույնիսկ այն դեպքերում, յերեքնարդեցնում ե ցելը:

Բացի այդ, ՌիՄԽՀ-ի տվյալները ցույց են տալիս, վոր Փոստուրական պարարտանյութերի եփեկան ավելի բարձր ե լինում յերեքնուկ պարունակող ցանքաշրջանառությունների մեջ:

Հյուսիսային վոչ-սևանղային գաշտային ցանքա շրջանառության մեջ յերեքնուկի դերն առանձնապես մեծ ե այդ հողերի ազդուով պղբատ լինելու և վատ ֆիզիկական հատկություններ ունենալու պատճառով:

Յերեքնուկի նկատմամբ ամենամեծ զգայնություն ցույց ե տալիս կտավհատը, վորն այս շրջանում սովորաբար ցանքում ե յերեքնուկից հետո:

Այսպես, նախկին Տեմիրյագերի անվան ակադեմիայի փորձադաշտի տվյալներով կտավհատից ստացված ե բերք (ցենտներ մեկ հեկտարին):

	Դարման	Մերմեր
Յերեքնուկից հետո . . .	19,1	4,4
Վարսակից հետո . . .	13,4	3,4

Նկատի առնելով աղոտի հարաբերական պակասը և հողերի ցածը կուլտուրականությունը, պիտի ընդունել, վոր ցանքաշրջանառության մեջ յերեքնուկ մտցնելը կարևոր պայմաններից մեկն է պոդղու հողերը կուլտուրական վիճակի բերելու համար:

Ինչ վերաբերում ե մյուս շրջաններին, ապա սրանց նկատմամբ մենք ունենք համեմատաբար պակաս փորձնական տվյալներ: Միջին Սահայի համար այդ տվյալները բավական են պնդելու, վոր այնտեղ ամենալավ նախորդներից մեկն առվույտն ե հանդիսանում, վորն զգալիորեն բարձրացնում ե բողահողերի բերքիությունը ջրովի պայմաններում: Միբիրի համար տվյալները բավական կցկառուը են: Տայգանների մոտ գտնվող շրջաններում, ուր աճում են յերեքնուկները (պոդղու հողերում), նրանք անպայմանորեն հանդիս են դալիս իրեկ լավ նախորդներ, բարձրացնելով հողի բերքիությունը:

Մինչև այժմ ասածներից կարող ենք հանել այն յեղբակացությունը, վոր բազմամյա խոտերը (հատկապես թիթեռնածաղկավորները), բացի իրենց անտեսական նշանակությունից, հանդիսանում են հզոր դրական ագրոտեխնիկական գործոն, վորի ազդեցությունը տարբեր հողային պայմաններում արտահայտվում է տարբերեց ձևով:

Բազմամյա խոտերի շնորհիվ հողում կուտակված բերքիությունն ոգտագործելիս շատ մեծ նշանակություն ունի այն ժամանակին և խնամքով մշակելու: Վատ և խամ թողած շերտերով վարած խոտանեղն արագ կերպով վարակվում ե մոլախոտերով և դրական եփեկա չի տալիս:

Ցանքաշրջանառության մեջ բազմամյա խոտերի ներմուծմանը մենք չենք կարող մոտենալ, հաշվի չառնելով տնտեսության կազմակերպչական-տնտեսական պայմանները:

Այդ տեսակետից կոլտնտեսական արտադրությունը տարբերվում է խորհանտեսություններից և յերեք չի կառուցվում անառաջարկածական պատճառով:

Իսկ անանապահության համար այլ կերերի հետ միասին պարտադիր կերպով անհրաժեշտ են և խոտերը: Այդ պատճառով կոլտնտեսությունների ցանքաշրջանառության մեջ խոտերը շատ

կամ քիչ չափով պիտի ներկայացված լինեն, նամանավանդ բնական խոտհարքներ պակաս լինելու դեպքում:

Յենելով պետական առաջադրանքներից, անասունների թվից և այլն, հաճախ (նամանավանդ հարավում) աննպատակահարմար և լինում ամեն տարի բաղմամյա խոտերին մեկական դաշտ հատկացնելը, քանի վոր հնարավոր և ոգտագրոծել նրանց միքանի տարի անընդհատ (առվույտ, *Երօնուս 4—5 տարի*): Այդ գեպքում բազմամյա խոտը հնարավոր և մշակել ցանքաշրջանառությունից դուրս, ուստի այդ դաշտը ժամանակավորապես չի մասնակցելու բույսերի հաջորդականությանը: Ապա, յերբ բազմամյա խոտերի բերքն սկսում և պակասել, այն մացնում են ցանքաշրջանառության մեջ, իսկ ցանքաշրջանառությունից դուրս են բերում դաշտերից մի ուրիշը: Բերենք հնդադաշտյան հացահատիկային ցանքաշրջանառության որինակ, վորոն ունի նաև մեկ դաշտ ցանքաշրջանառությունից դուրս:

Տարի	I դաշտ	II դաշտ	III դաշտ	IV դաշտ	V դաշտ	VI դաշտ
1	Ցել	Աշ-ցան	Գար-ցան	Շաբք-հերկ	Գար-ցան	Խոտ
2	Աշ-ցան	Գար-ցան	Շաբք-հերկ	Գար-ցան	Ցել	Խոտ
3	Գար-ցան	Շաբք-հերկ	Գար-ցան	Ցել	Աշ-ցան	Խոտ
4	Շաբք-հերկ	Գար-ցան	Ցել	Աշ-ցան	Գար-ցան	Խոտ
5	Գար-ցան	Ցել	Աշ-ցան	I առ. խոտ	Շաբք-հերկ	Գար-ցան
6	Ցել	Աշ-ցան	Գար-ցան	II առ. խոտ	Գար-ցան	Շաբք-հերկ
7	Աշ-ցան	Գար-ցան	Շաբք-հերկ	III առ. խոտ	Ցել	Գար-ցան
8	Գար-ցան	Շաբք-հերկ	Գար-ցան	IV առ. խոտ	Աշ-ցան	Ցել
և այլն						

Բացի այդ, կարելի յէ խոտերին հատկացնել դաշտի կեսը: Այդպես և, որինակ՝ Մոսկվայի շրջանի միքանի կոլտնտեսությունների ցանքաշրջանառությունը (մասնագիտացած են կարտոֆիլ և կաթ արտադրելու ուղղությամբ) 1) զբաղված ցել, 2) աշնանացան (դաշտի կեսը ցանքում ե յերեքնուկի հեա միասին), 3) 0,5 յերեքնուկ և 0,5 կարտոֆիլ, 4) 0,5 յերեքնուկ (II առ.) և կես սիլոսարույսեր, 5) կարտոֆիլ, 6) վարսակ: Այս ցանքաշրջանառության մեջ բազմամյա խոտերն զբաղեցնում են 16⁰/₀: Բավական տեղ հատ-

կացված և աշնանացաններին, իսկ կարտոֆիլը ներկայացված ե 25⁰/₀-ով:

Ցանքաշրջանառության մեջ մտնող միամյա խոտերն ավելի պակաս ազրոտեխնիկական եքեկտ են ունենում, քան թե բաղմամյա խոտերը, վորովհետև նրանք հողում թողնում են պակաս քանակությամբ արմատային մեջացրդները Միամյա ընդեղենները կուտակում են պակաս ազրտ, քան թե բաղմամյանները (յերեքնուկ, առվույտ) և յերկամյանները (իշառվույտ), Շաբքահերկերի և գարնանացանների համար միամյա խոտերը հանդիսանում են իրեւ բավականին լավ նախորդները:

Աշնանացանների համար (ցելն զբաղեցնելու համար) նրանք հաջողությամբ կարող են ոդտագործվել խոնավ գոտում: Արագ աճելով և արտը խոտով խիտ ծածկելով, ինչպես նաև քաղվելով նախքան մոլախոտերի սերմ տալը, նրանք սովորաբար արտը մաքրում են մոլախոտերից: Դրա համար անհրաժեշտ ե, վորպեսզի նրանք ցանլեն ժամանակին: Հացաբույսերի ընտանիքի միամյա խոտերը (մոգար, սուլանի խոտ և այլն) սկզբում դանդաղ են զարգանում և մոլախոտերի գեմ վատ են պայքարում: Մոլախոտերով վարակված հողերում հաճախ կարիք ե լինում նրանց ցանել լայն շարքերով:

ԱՇՆԱՆԱՑԱՆՆԵՐԸ ՅԵՎ ԳԱՐՆԱՆՑԱՆՆԵՐԸ ՅԱՆՔԱՇԲԱՆԱՇԱՆԱՇԱՆՆԵՐԸ ԵՐՋԱՆԱՇԱՆԱՇԱՆՆԵՐԸ ՄԵԶ

Ինչպես արդեն մենք նշել ենք, հացահատիկները մոլախոտերի գեմ վատ են պայքարում: Այդ խնդիրն ամենից լավ կատարում և աշնանային աշորան, վորը գարնանն արագ աճում և խեղդում ե մոլախոտերը: Լավ ձմեռելու և բացուտների բացակայության դեպքում աշորան գարնանացաններին հատկացված արտը թողնում ե բավականին մաքուր վիճակում, առանձնապես այն դեպքում, յերբ այն հաջորդել ե մաքուր ցելին: Աշորայի ցանքերը խրպուկի գեմ պայքարելու լավ միջոց են:

Աշնանացանից հետո (առանձնապես պարարտացրած) լավ են գնում նաև շարքահերկ կուլտուրանները: Աշնանացանն աշնանացանից հետո սովորաբար ավելի վատ ե լինում, քան թե զբաղված ցելից հետո, բայց ավելի լավ ե, քան թե զբաղնացանից հետո (բացի գարուց ԲՍԽՀ-ում և Արևմտյան մարզերում): Բայց և այնպիս ԽԾՀՄ-ի հարավարեւմտյան և Հյուսիսային Կովկասի խոնավ մասերում մեկ անգամ աշնանացանն աշնանացանից հետո մշակելը միան-

գամայն թուլլատրելի յեւ և սովորաբար դրանից բերքի առանձին նվազում տեղի չի ունենում, յեթե միայն խռպանատեղը մշակվում է անմիջապես բերքահավաքից հետո: ԽՍՀՄ-ի և Ղրիմի ցորենի շրջան-ներում հատիկացին ցանքաշրջանառության նման ողակը բավականաչափ տարբածված է: Նման գեպքում յերկորդ աշնանացանի տակ ցանկալի յեւ մացնել ֆոսֆատներ, իսկ կարճ վեգետացիա ունեցող շրջաններում և վարակված արտերում նույնիսկ մեկ անգամ աշնանացանն աշնանացանից հետո մշակելը չի կարող թույլատրվել:

Դարնանային հացերը սովորաբար հանդիսանում են վատ նախորդներ, մոլախոտերով վարակված լինելու պատճառով: Սովորաբար նրանք փակրւմ են ցանքաշրջանառությունը: Ամեսից շատ այդ նպատակի համար, իրքև ամենից քիչ պահանջկոտ կուլտուրա, գնում և վարսակը կամ կորեկը, վերջինը մոլախոտերին դիմադրելու ավելի վատունակ ե, քան թե մնացած բոլոր գարնանացանները:

Այն շրջաններում, ուր գարնանացանի բերքահավաքի և աշնանացանի ցանքի մեջ կա բավականաչափ ժամանակամիջոց, աշնանացանի ցանք կատարել գարնանացաններից հետո (առանձնապես դարուց հետո) միանգամայն հնարավոր և (գլխավորապես աշորա): Որինակ, Հյուսիսային Կովկասում գարնանային ցորենը հաճախ աշորայի համար ավելի լավ նախորդ կլինի (յեթե միայն խողանատեղը ժամանակին մշակվել ե), քան թե ուշ հավաքվող շարքահերկ կուլտուրաները (արևածաղկի, յեգիպատաշորին և այլն), վորոնց պատճառով աշնանացանների ցանքն ուշանում ե:

Տնաեսության կազմակերպման տեսակետից ցանքաշրջանառության մեջ աշնանացանների և գարնանացանների զուգորդությունն (սուրառե) ունի շատ մեծ նշանակություն՝ հնարավորություն ստեղծելով ավելի ճիշտ որտագործելու բանվոր ձեռքերը և քաշող ուժը:

Ցանքաշրջանառության մեջ հացերից միայն գարնանացանների առկայության գեպքում մենք աշխատանքների խիստ լարվածություն կունենանք գարնանը՝ ցանքի, ամռանը՝ բերքահավաքի և աշնանացանի ժամանակի: Աշնանացանների և գարնանացանների առկայության գեպքում բոլոր աշխատանքները հավասարապես կդասավորվեն՝ այսինքն, գարնանացանների ցանքին կհաջորդի զել կատարելը, բերքահավաքի ժամանակաշրջանը կմեծանա, վորովհետև աշնանացանները շուտ են հավաքվում, քան թե գարնանացանները և այլն:

Հատիկավոր ընդեղենները նույնիսկ համատարած ցանք կտարարելու դեպքում մյուս կուլտուրաների համար ծառայում են իրեն լավ նախորդներ, վորովհետև իրենցից հետո թողնում են հողում ազոտ և լավ են ձնշում մոլախոտերը:

ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՑԱՆՔԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ
ԿԻՐԱԾԵԼԸ ՏԵԽՆԻԿԱ

Բերքատվության բարձրացման և խորհտնտեսությունների ու կուլտնտեսությունների աշխատանքների ամրապնդման նպատակով ԽՍՀՄ-ի Հողտողկոմատի կոլեգիան 1932 թ. հունվարի 2-ին վորոշել ե բոլոր խորհտնտեսություններում և կուլտնտեսություններում անպայմանուրեն մացնել ցանքաշրջանառություն:

Համկոմիկուսի և ԽՍՀՄ-ի Ժողկոմիսորենի վորոշման համաձայն 1933 թվի ընթացքում բոլոր խորհտնտեսություններում և կուլտնտեսություններում պիտի ցանքաշրջանառություն կիրառվի ցիրել բերքատվության բարձրացման ամենալավ միջոցներից մերը: Այդ վորոշումը հարցը սրում ե նաև այն մասին, վորպեսզի ցանքաշրջանառության կիրառումը վորոշ շրջաններում և մարզերում կավագած լինի հասկավոր հացահատիկային կուլտուրաների բռնած արածությունները համապատասխան չափով լայնացնելու հետո:

Ամեն մեկ կուլտնտեսություն 1934 թ. գարնանը պիտի գիմավորի արգեն ընդունված և համապատասխան դաշտերում աշնանացան կատարած ցանքաշրջանառությամբ:

Ցերկրորդ հնգամյակի, համար ընդունված գյուղատնտեսության զարգացման դրույթների համապատասխան՝ շրջանները, մտրպերը և հանրապետությունները նախազեն են մասնագիտացած խորհտնտեսությունների և կուլտնտեսությունների համար ցանքաշրջանառության վորոշ սխեմաները: Այդ սեխեմաները հասցված են տեղերին:

Սակայն վոչ մի գեպքում այդ սխեմաները չի կարելի համարել պարտադիր շրջանի բոլոր տնտեսությունների համար:

Ամեն մեկ կուլտնտեսություն պետք ե քննի այդ առաջարկված սխեմաները, և վերջինները հիմք ընդունելով ու հաշվի առնելով իր բոլոր տնտեսական հնարավորությունները, կազմի երեն համար կոնկրետ ցանքաշրջանառություն:

Ցանքաշրջանառություն կազմելու համար պիտի գիտենալ ապրանքային կուլտուրաների նկատմամբ շրջանի կողմից գրը-

ված պլանային առաջադրանքը, թ) մշակվող կուլտուրաների ազգութեխնիկական առանձնահատկությունները, գ) հողի, կրիմայի և այլ բնույթը, դ) բանող ձեռքի, քաշող ուժի քանակը, տնտեսությունը պարարտանյութերով և մեքենաներով մատակարարելու հեռանկարը, ե) ինչպես կոլտնտեսության, այնպես եւ կոլտնտեսականների սեփականություն կազմող անասունների թիվը:

Ցանքաշրջանառությունը պիտի ապահովի պլանային առաջադրանք՝ ապրանքային կուլտուրաների տակ գտնվող տարածությունները և ամենալավ պարմաններն ստեղծի նրանց գարգացման համար:

Ցանքաշրջանառություն ընդունելիս պիտի հաշվի առնել, թե այն վորքան ճիշտ ե ազգութեխնիկորեն, ապահովում ե մոլախոտերի դեմ մղվող պայքարը, թույլ չի տալիս արդյոք վնասատուների դարգացում և այլն:

Ապա պիտի մշակել այն հարցը, թե կոլտնտեսականները մթերքներով և նրանց անասունները կերերով (տարբեր տեսակի) վորքան են ապահովում: Այդ դեպքում չի կարելի հուսով լինել, վոր այդ հարցը մի կերպ կկարգավորվի:

Բացի այդ՝ անհրաժեշտ ե հաշվել բանվոր ձեռքերի և քաշող ուժի քանակն ըստ առանձին ժամանակաշրջանների (առանձնապես ավելի լարված շրջաններում, որինակ՝ ցանքի, բերքահավաքի, շարքահերկ կուլտուրաների խնամքի):

Յեթե մեզ հարկավոր ե համեմատել ցանքաշրջանառության մի քանի սխեմաներ, ապա անհրաժեշտ ե հաշվել աշխատանքի և մեքենաների արտադրողականությունը (պրոդուկցիայի քանակը մեկ որում մեկ մարդին):

Անպայմանորեն անհրաժեշտ ե հաշվի առնել բնական կերպային տարածությունների առկայությունը և քննել նրանց լավացման ու բերքատվության բարձրացման հնարավորության խնդիրը:

Միաժամանակ պիտի վորոշի նաև այն հարցը, թե քանի տիպի ցանքաշրջանառություն պիտի ընդունել:

Հատ հաճախ սահմանափակվել մեկ ցանքաշրջանառությամբ հնարավոր չի լինում: Արմատապտուղների, սիլոսային կուլտուրաների փոխադրության դժվարությունը, ինչպես նաև բանջարացյալին և մի քանի այլ կուլտուրաներն ամենապարար հողերում տեղափորելու պահանջը (յերբ նրանք ցանվում են փոքր տարածությունների վրա) անհրաժեշտ են դարձնում մշակել այն հարցը,

թե արդյոք կարիք չկա՞ ունենալ գյուղին մոտ առանձին ցանքաշրջանառություն, ուզ և պիտի մշակվեն այդ կուլտուրաները: Այստեղ չպիտի մոռանալ այն, վոր արտերի ավելորդ մասնատումը դժվարացնում ե մեխանիզացիան:

Վորոշ դեպքերում կարիք ե լինում ունենալու արոտադաշտ ունեցող ցանքաշրջանառություն:

Ցանքաշրջանառության թիվը վորոշելիս վորոշ նշանակություն պիտի ունենան նաև կոլտնտեսության հողալին պայմանները: Նրա տերիտորիայի վրա կարող են լինել, ասենք, կիսաճանացած կամ աղիացած կամ ավաղային հողեր, վորոնք իրենց բերբությամբ խստ կերպով կտարբերվեն կոլտնտեսության մնացած մասի հողերից, ուստի և կպահանջնեն առանձին ցանքաշրջանառության կիրառում:

Ազրոնոմի դեկավարությամբ կտարբող ցանքաշրջանառության մշակման աշխատանքներին պիտի պարտադիր կերպով ներգրավել կոլտնտեսականներին: Կոլտնտեսություններում ցանքաշրջանառություն կազմելու և մտցնելու ըյուրոկրատիկ վարչական յեղանակները հանդիսանում են կուսակցության դիրեկտիվների կոպիտ խախտում, մոռացում այն բանի, վոր կոլտնտեսությունը կոլտնտեսականներին և պատկանում:

Ցանքաշրջանառություն (կամ ցանքաշրջանառություններ) ընդունելուց հետո, պիտի պլանի վրա կոլտնտեսության հողերը հողաշինարարի և կոլտնտեսականների հետ միասին բաժանել համապատասխան թվով դաշտերի, վոչ մի դեպքում այս տշխատանքը մեխանիկորեն չի կարելի կատարել: Պիտի հաշվի առնել թե ինչ կուլտուրաներով և զրագված յեղել ամեն մեկ դաշտը, նրա այժմյան բերքատվությունը, մոլախոտերով վարակված լինելու չափը: Ավելի վարակված դաշտերն առաջին հերթին պիտի հատկացնել մաքուր ցելերին, ավելի փոշիացած հողերն առաջին հերթին պիտի հատկացնել խոտեր ցանելուն:

Պլանի վրա դաշտերի բաժանումը կատարելիս պիտի հաշվի առնել ամեն մեկ դաշտի կոնֆիգուրացիան (ձեռ), մշակումը, խռնամքը և բերքահավաքը մեխանիզացիայի յենթարկելու, արանսպորտի հարմարությունները և այլն:

Ապա, պիտի կազմել անցողիկ ցանքաշրջանառություն, վորի դերն և ամփոփել միատեսակ կուլտուրայի ցրված ցանքերն ամբողջական դաշտերի վրա: Այդ տիպի ցանքաշրջանառությունը պիտի

Նախատեսի ամեն մեկ դաշտում կատարվող ցանքի կարդը մինչև ցանքաշրջանառության վերջնական և լրիվ կիրառումը:

Նրա կիրառումն արագացնելու համար պիտի հաշվի առնել այն, վոր, որինակ՝ բազմամյա խոտերը 2—3 տարի պիտի մնան մինչույն դաշտում, ուստի 1933 թվի գարնանը ցանքաշրջանառության մեջ նրանց հատկացրած համապատասխան դաշտերն անպայմանորեն պիտի ցանվեն:

Նոր յուրացված հողերում ժամանակավորապես՝ պիտի կիրառել բույսերի հաջորդականություն՝ հողի բնական բերրիությունը մաքսիմալ չափով ոգտագործելու համար:

Ասենք, Արևմտյան շրջանի վորմե կոլտնտեսություն յենթադրում ե մոտակա տարիներում վարել խոպանացած (խամ) հողերի մեծ տարածություններ: Միանգումայն նպատակահարմար և ոգտագործել այդ հողերն առաջիկա տարիներում կտավհատի, վիկ-վարսակի համար և այլն:

Իրականում հողը ցանքաշրջանառության առանձին դաշտերի բաժանելիս այնպես պիտի անել, վոր ամեն մեկ դաշտ ունենա վորոշ թվով արտադրական վանդակներ: Այդ կհեշտացնի հետագա աշխատանքները:

Ակսելով ցանքաշրջանառության կիրառման պատասխանառու գործը, վոչ մի բոպե չի կարելի մոռանալ, վոր գա կուսակցության դիւնելուիների կենսագործումն ապահովող կարեռագույն քաղաքական խնդիր և, վոր անհրաժեշտ և մղել վճռական պայքար ինչպես ցանքաշրջանառության վերը թերագնահատելու, այնպես ել այդ բնագավառում բոլոր հնարավոր բուժություն և ոպղորունիստական աղավաղումների դեմ, վորոնք հաճախ վարագուրված են ինուօն ուլտրա-հեղափոխական ֆրազներով: Մասնավորապես պիտի վճռական հականարված տալ լազագույն ցանքաշրջանառություններ կիրառելու դրոշակի տակ հաշահատիկներին հատկապնիք տաղածությունները կրծատելու փորձերին:



ՀԱՂՃԱՊԿՈՄՍԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՅԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԿԻՐԱՊՎՈՂ ՅԱՆՔՌՉԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԻ ՔԱՆԻ ՄԲԵՄՄՆԵՐ

I. ԶՈՒՏ ԱՆԱՄՆ. ՑԱՆՔ.-ԵՐ
Ա.

1. Գրադված ցել
2. Գարն. կամ աշնան. հացահատիկ
3. Շարքահերկ
4. Գարնանացան հացահատիկ

- Բ
1. Գարնանացան+բազմամյա խոտ
 2. Բազմամյա խոտ
 3. » » »
 4. Գարնանացան
 5. Շարքահերկ
 6. Գարնանացան

II. ԱՆԱՄՆ.-ՀԱՅԱՀԱՏԻԿԱՅԻՆ
Ա.

1. Գրադված ցել (կամ մաքուր)
2. Աշնանացան
3. Գարնանացան
4. Շարքահերկ
5. Գարնանացան

- Բ
1. Գարնանացան+բազմամյա խոտ
 2. Բազմամյա խոտ
 3. » » »
 4. Գարնանացան
 5. Գարնանացան
 6. Ցել (գրադված կամ մաքուր)
 7. Աշնանացան

III. ԾԽԱԽՈՑԱՅԻՆ
Ա.

1. Գարնանացան+բազմամյա խոտ
2. Բազմամյա խոտ
3. Բազմամյա խոտ
4. Ծխախոտ

Բ

1. Աշնանացան+խողանացան վիկ (աշնանային)
2. Ծխախոտ

IV. ՃԱԿՆԴԵՂԻ

1. Գարնանացան+բաղմամյա խոտ
2. Բաղմամյա խոտ
3. Բաղմամյա խոտ
4. Շաքարի ճակնդեղ
5. Զբաղված ցել կամ սիլոս
6. Աշնանացան
7. Շաքարի ճակնդեղ

V. Բ Ա Մ Բ Ա Կ Ի

1. Բամբակ
2. Բամբակ
3. Բամկակ
4. Բամբակ
5. Գարնանացան
6. Աշնանացան+առվույտ
7. Առվույտ
8. Առվույտ

VI. ԶՈՒՏ ՀԱՅԱՀԱՏԻԿԱՑԻՆ

Ա

1. Ցել
2. Աշնանացան
3. Գարնանացան

Բ

1. Ցել
 2. Աշնանացան
- | | |
|-------------------------------|---|
| կոտայքում և Աշտարակի շրջանում | կ |
| | |

1. Ցել
2. Աշնանացան
3. Գարնանացան
4. Շաքահերկ
5. Գարնանացան
6. Գարնանացան

ՀՀ Ազգային գրադարան



NL0936474

1934/п. 1

№12 50 ч.

11
27910



ИГОРЬ Н. С. ССХОЛОВ

СКВОБОРОТ И ЕГО ЗНАЧЕНИЕ В С.-Х. ПРОИЗВОДСТВЕ

Сельхозтех

1934

Эридан